

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը

Սույն օրենքը սահմանում է հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) պատրաստելու և ներկայացնելու միասնական հիմունքները, կարգավորում է հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող իրավաբանական անձանց (ներառյալ՝ նրանց ստեղծած հիմնարկների), օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) վրա:

2. Համայնքների ղեկավարների աշխատակազմերի, պետական կառավարչական հիմնարկների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վրա սույն օրենքը տարածվում է մինչև նշված կազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման առանձին օրենքի ընդունումը:

3. Սույն օրենքը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման (այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման, ներկայացման), ինչպես նաև հաշվապահի որակավորման հետ կապված հարաբերությունների վրա:

4. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ապահովագրական ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման մարմինների և գլխավոր հաշվապահի կամ նման պարտականություններ իրականացնող անձի միջև իրավունքների ու պարտականությունների բաշխման առանձնահատկությունները սահմանվում են համապատասխանաբար «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վարկային կազմակերպությունների մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հոդված 3. Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը

1. Խոշոր կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝

1) սույն օրենքը.

2) Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից հրապարակված և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (այսուհետ՝ ամբողջական ՖՀՄՄ-ներ) և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքները: Ամբողջական ՖՀՄՄ-ները ներառում են.

ա. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (IFRS).

բ. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (IAS).

գ. Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (IFRIC) կամ նախկին Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (SIC) մեկնաբանությունները.

3) ամբողջական ՖՀՄՄ-ների հիման վրա մշակված խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները և դրանց ներկայացման ու բացահայտման ստուգման աղյուսակը.

4) սույն օրենքով նախատեսված իրավական այլ ակտեր:

2. Փոքր և միջին կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝

1) սույն օրենքը.

2) Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից հրապարակված և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ).

3) ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի հիման վրա մշակված փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները և դրանց ներկայացման ու բացահայտման ստուգման աղյուսակը.

4) սույն օրենքով նախատեսված իրավական այլ ակտեր:

3. Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար փոքր և միջին կազմակերպությունները իրենց հայեցողությամբ կարող են կիրառել սույն հոդվածի առաջին մասում նշված իրավական ակտերը:

Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար խոշոր կազմակերպությունները չեն կարող կիրառել սույն հոդվածի երկրորդ մասում նշված իրավական ակտերը:

4. Սույն օրենքի իմաստով խոշոր կազմակերպություններ են համարվում՝

1) հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպությունները: Կազմակերպությունն ունի հանրային հաշվետվողականություն, եթե՝

ա. նրա պարտքային կամ բաժնային գործիքները (արժեթղթերը) շրջանառվում են բաց շուկայում (տեղական կամ օտարերկրյա ֆոնդային բորսա, ներառյալ տեղական և տարածաշրջանային շուկաները), կամ այն գտնվում է բաց շուկայում շրջանառելու համար այդպիսի գործիքներ թողարկելու գործընթացում, կամ

բ. հանդիսանում է բանկ, վարկային կազմակերպություն, վճարահաշվարկային կազմակերպություն, ներդրումային ընկերություն, կարգավորվող շուկայի օպերատոր,

կենտրոնական դեպոզիտարիա, ապահովագրական ընկերություն, վերաապահովագրական ընկերություն, ներդրումային ֆոնդ կամ ներդրումային ֆոնդի կառավարիչ:

2) 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունները, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների կարգավորման ոլորտում գործող կազմակերպությունները, որոնք բավարարում են հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսին.

ա. անմիջապես նախորդող երեք տարիներից յուրաքանչյուր տարվա շահութահարկի հաշվարկման նպատակով սահմանված համախառն եկամուտը գերազանցել է մեկ միլիարդ դրամը.

բ. անմիջապես նախորդող երեք տարիներից յուրաքանչյուր տարվա տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցել է մեկ միլիարդ դրամը.

գ. անմիջապես նախորդող երեք տարիներից յուրաքանչյուր տարվա համար Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը գերազանցել է հարյուրը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն խոշոր չհամարվող կազմակերպությունը սույն օրենքի իմաստով համարվում է փոքր և միջին կազմակերպություն:

Հոդված 4. Հաշվապահական հաշվառման կիրառումն ապահովող մարմինը

1. Հաշվապահական հաշվառման իրավահարաբերությունները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի կիրառման ապահովումն իրականացնում է կառավարության լիազորած մարմինը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, իսկ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, արժեթղթավորման հիմնադրամների համար՝ կենտրոնական բանկը՝ կառավարության լիազորած մարմնի հետ համատեղ (այսուհետ՝ լիազոր մարմին, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով և սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, երբ լիազոր մարմին հասկացությունը վերաբերում է միայն կառավարության լիազորած մարմնին):

2. Լիազոր մարմինն իր իրավասության սահմաններում հաստատում է՝

1) խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը.

2) խոշոր կազմակերպությունների ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները և դրանց ներկայացման ու բացահայտման ստուգման աղյուսակը.

3) փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը.

4) փոքր և միջին կազմակերպությունների ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները և դրանց ներկայացման ու բացահայտման ստուգման աղյուսակը.

5) սույն օրենքով նախատեսված իրավական այլ ակտեր:

3. Լիազոր մարմինն իրականացնում է ամբողջական ՖՀՄՍ-ների և ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքների՝ ներառյալ դրանցում կատարված փոփոխությունների և լրացումների թարգմանումը հայերեն՝ նշված խորհրդի սահմանած ընթացակարգերին համապատասխան և ապահովում է դրանց գործողության մեջ դնելու իրավական ակտի նախագծի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից կատարված փոփոխությունների կամ լրացումների հրապարակումից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Գ Լ ՈՒ Խ 2

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 5. Հաշվապահական հաշվառումը

1. Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

2. Կազմակերպությունները (ներառյալ՝ անվճարունակության կամ լուծարման գործընթացում գտնվողները) պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում:

3. Լիազոր մարմինն օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, ինչպես նաև անվճարունակության կամ լուծարման գործընթացում գտնվող կազմակերպությունների համար կարող է սահմանել հաշվապահական հաշվառման առանձնահատկություններ:

Հոդված 6. Ֆինանսական հաշվետվությունները

Ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացումն են:

Գ Լ ՈՒ Խ 3

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՈՒՄԸ

Հոդված 7. Կազմակերպության ղեկավարության իրավունքները և պարտականությունները հաշվապահական հաշվառման կազմակերպման գործում

1. Կազմակերպության ղեկավարությունը պարտավորություն է կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու, հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու ու ներկայացնելու համար:

2. Սույն օրենքի իմաստով կազմակերպության ղեկավարություն է համարվում գործադիր մարմնի ղեկավարը, լուծարվող կազմակերպության անվճարունակության կառավարիչը, արտաքին կառավարիչը, անհատ լուծարողը, լուծարային հանձնաժողովի նախագահը (այսուհետ՝ կազմակերպության ղեկավար), ինչպես նաև այլ մարմիններ և (կամ) անձինք, եթե այդ մասին նախատեսված են իրավական այլ ակտերով և (կամ) կազմակերպության կանոնադրությամբ և (կամ) ներքին իրավական ակտերով:

3. Կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է՝

1) կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով.

2) կազմակերպության աշխատողը համարվող հաշվապահի միջոցով.

3) հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ միջոցով.

4) կազմակերպության ղեկավարի կողմից՝ անձամբ:

4. Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը սահմանում է կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, եթե այդ իրավասությունը կանոնադրությամբ վերապահված չէ կառավարման այլ մարմնին:

Հոդված 8. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները

1. Կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը, իսկ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ այդ կազմակերպության լիազորած անձը կամ սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված այլ անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ)՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

2. Գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին պատրաստելու և ներկայացնելու համար:

3. Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է կազմակերպության բոլոր աշխատողների համար:

4. Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

Հոդված 9. Հաշվապահի որակավորում

1. Հաշվապահի որակավորումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջներին բավարարող՝ հաշվապահի որակավորում ստանալու համար լիազոր մարմնին կամ մասնագիտացված կառույցին դիմած ֆիզիկական անձի մասնագիտական գիտելիքների ստուգման արդյունքների հիման վրա հաշվապահի որակավորման վկայական (այսուհետ՝ վկայական) տալու ընթացակարգ է:

Հաշվապահի որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Քննությունների ծրագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Քննությունները կազմակերպվում և անցկացվում են լիազոր մարմնի և (կամ) մասնագիտացված կառույցի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած որակավորման քննությունների ծրագրի շրջանակներում:

Որակավորված հաշվապահների ցանկը յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ մինչև տվյալ ամսվա 5-ը հրապարակվում է կառավարության լիազորած մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

Վկայականը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետով, որը չի կարող պակաս լինել 5 տարուց:

2. Բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահների որակավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

3. Սույն օրենքի իմաստով մասնագիտացված կառույց է համարվում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց անդամության հիման վրա օրենքով սահմանված կարգով ստեղծված կամ լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված ինքնակարգավորվող ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունը:

4. Խոշոր կազմակերպությունում գլխավոր հաշվապահ կարող է աշխատել սույն հոդվածի 1-ին մասի համաձայն հաշվապահի որակավորում ունեցող անձը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորի որակավորում ունեցող անձը: Այն դեպքում, երբ խոշոր կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է մասնագիտացված կազմակերպության կողմից, ապա վերջինիս կողմից գլխավոր հաշվապահի գործառույթներն իրականացնող լիազորված անձը ևս պետք է ունենա հաշվապահի կամ աուդիտորի որակավորում:

5. Եթե կազմակերպությունը սույն օրենքի համաձայն համարվում է խոշոր, ապա այդ կազմակերպությունում աշխատող, սակայն հաշվապահի կամ աուդիտորի որակավորում չունեցող գլխավոր հաշվապահը՝

1) սույն օրենքի 3-րդ հոդվածի չորրորդ մասի 1-ին կետում նշված դեպքերում կարող է կազմակերպության խոշոր համարվելու օրվանից մեկ տարվա ընթացքում շարունակել կատարել գլխավոր հաշվապահի պարտականությունները.

2) սույն օրենքի 3-րդ հոդվածի չորրորդ մասի 2-րդ կետում նշված դեպքերում կարող է մինչև կազմակերպության խոշոր համարվելու տարվա ավարտը շարունակել կատարել գլխավոր հաշվապահի պարտականությունները:

Հոդված 10. Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները

1. Հաշվապահական հաշվառումը վարվում է՝

1) կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հիման վրա.

2) անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև նրա գործունեության դադարեցման գրանցման համար ռեգիստրին դիմում ներկայացնելու օրը:

2. Իրավահաջորդությամբ գործունեության դադարեցման դեպքում վերակազմակերպվող կազմակերպության իրավահաջորդը (իրավահաջորդները) շարունակում է (նոր ստեղծվողները՝ սկսում են) իր հաշվապահական հաշվառման վարումը՝ որպես անցման ելակետ ընդունելով բաժանիչ հաշվեկշռի կամ փոխանցման ակտի տվյալները և մինչև վերակազմակերպման գրանցման օրվան նախորդող օրը վերակազմակերպվող կազմակերպության կատարած գործառնությունները և նրան վերաբերող տեղի ունեցած դեպքերը:

3. Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման տվյալները պետք է համապատասխանեն միմյանց:

Հոդված 11. Մկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը

1. Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը:

2. Սկզբնական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան հետևյալ պարտադիր վավերապայմանները.

1) փաստաթղթի անվանումը.

2) հերթական համարը.

3) կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

4) գործառնության մասնակիցների անվանումը (անունները, ազգանունները).

5) տնտեսական գործառնության բովանդակությունը.

6) տնտեսական գործառնության չափման միավորները՝ դրամական և (կամ) բնաիրային արտահայտությամբ.

7) պատասխանատու անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը:

3. Սկզբնական հաշվառման փաստաթղթերում կարող են ներառվել լրացուցիչ վավերապայմաններ՝ կախված գործառնության բնույթից և տվյալների մշակման համակարգից: Լրացուցիչ վավերապայմաններ կարող են սահմանել լիազոր մարմինը և (կամ) կազմակերպությունը:

4. Սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար դրանց փոխանցման պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք:

5. Սկզբնական հաշվառման փաստաթղթերում սխալի ուղղումը համաձայնեցվում է տնտեսական գործառնության մասնակիցների հետ և հաստատվում տվյալ փաստաթուղթն ստորագրելու իրավունք ունեցող անձանց ստորագրություններով՝ նշելով ուղղման տարին, ամիսը և ամսաթիվը: Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր կազմակերպություն իր ներքին իրավական ակտերով կարող է սահմանել սխալի ուղղման ընթացակարգը:

6. Լիազոր մարմինը կարող է սահմանել սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևեր: Կազմակերպությունը կարող է օգտագործել այդ ձևերը, կամ՝ սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան, դրանք սահմանել ինքնուրույն:

7. Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով կարող են սահմանվել պարտադիր կիրառման ենթակա սկզբնական հաշվառման փաստաթղթերի ձևեր:

Հոդված 12. Հաշվապահական հաշվառման գրանցամատյանները

1. Սկզբնական հաշվառման փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաքվում և համակարգվում է հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյաններ):

2. Գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները գրանցամատյաններում գրանցվում են ժամանակագրական կարգով:

3. Լիազոր մարմինը կարող է սահմանել գրանցամատյանների օրինակելի ձևեր, որոնցից կազմակերպությունն ինքնուրույն ընտրում է իր կողմից կիրառելի ձևը, կամ, ելնելով սույն օրենքից և հաշվապահական հաշվառման ընդհանուր մեթոդաբանական սկզբունքներից, ինքնուրույն սահմանում է գրանցամատյանների ձևերը:

4. Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով կարող են սահմանվել պարտադիր կիրառման ենթակա գրանցամատյանների ձևեր և դրանց լրացման հրահանգներ:

Հոդված 13. Ստորագրության իրավունքը հաշվապահական հաշվառման փաստաթղթերում

Հաշվապահական հաշվառման փաստաթղթերն ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարությունը, ընդ որում, կարող է սահմանվել ստորագրության իրավունքի պաշտոնակարգություն՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական արժեքի մեծությունից:

Հոդված 14. Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը

1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելուց առաջ կազմակերպությունը պարտադիր անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Պարտադիր գույքագրման անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Բացի սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքից, գույքագրման օբյեկտների կազմը և գույքագրման անցկացման կարգը որոշում է կազմակերպության ղեկավարը:

3. Գույքագրմամբ հայտնաբերված՝ պատկանելությունը չպարզված գույքի ճակատագիրը որոշվում է տիրագործի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման քաղաքացիաիրավական կանոններով:

Հոդված 15. Հաշվապահական տեղեկատվության գաղտնիությունը

1. Սկզբնական հաշվառման փաստաթղթերում, գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար պատրաստված հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը համարվում է առևտրային գաղտնիք, որին կարելի է ծանոթանալ օրենքով կամ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով, ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

2. Առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությանը ծանոթացած անձինք և կազմակերպությունները պարտավոր են պահպանել դրա գաղտնիությունը: Վերջինիս հրապարակման կամ որևէ այլ կերպ բացահայտման դեպքում նրանք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Առևտրային գաղտնիքի հրապարակում կամ բացահայտում չի համարվում <<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում դրա տրամադրումը:

3. Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը առևտրային գաղտնիք չի համարվում:

Հոդված 16. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը

1. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերում և էլեկտրոնային կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը կազմակերպության կողմից պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան 5 տարի:

2. Լիազոր մարմինը հաշվապահական հաշվառման վարման համակարգչային ծրագրերի նկատմամբ կարող է սահմանել տեխնիկական պահանջներ:

3. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի առգրավումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Կազմակերպությունն իրավունք ունի առգրավված փաստաթղթերը կրկնօրինակել և պահել իր մոտ:

4. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու պարտականությունը կրում է կազմակերպության ղեկավարը՝ կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 17. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

1. Խոշոր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ամբողջական ՖՀՄՄ-ներով:

2. Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով:

3. Եթե ֆինանսական հաշվետվություններն օրենքով սահմանված դեպքերում ենթակա են աուդիտի (պարտադիր աուդիտ), ապա ներկայացվող ֆինանսական հաշվետվություններին կից պետք է ներկայացվի աուդիտորական եզրակացություն:

Հոդված 18. Ֆինանսական հաշվետվությունների կազմմանը ներկայացվող պահանջները

1. Բոլոր կազմակերպություններն անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալների հիման վրա պարտավոր են կազմել ֆինանսական հաշվետվություններ:

2. Ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության ներկայացման վերաբերյալ պահանջները սահմանվում են՝

1) խոշոր կազմակերպությունների համար՝ ամբողջական ՖՀՄՄ-ներում.

2) փոքր և միջին կազմակերպությունների համար՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ում:

3. Ֆինանսական հաշվետվություններն ստորագրում են կազմակերպության ղեկավարը և գլխավոր հաշվապահը: Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված դեպքում ֆինանսական հաշվետվությունները կարող է ստորագրել միայն կազմակերպության ղեկավարը:

4. Կազմակերպության վերակազմակերպման դեպքում կազմվող բաժանիչ հաշվեկշիռը կամ փոխանցման ակտը կազմվում են ֆինանսական հաշվետվությունների կազմման համար սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով լիազոր մարմնի սահմանած առանձնահատկությունները:

5. Լուծարման գործընթացում գտնվող կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման առանձնահատկությունները սահմանում է լիազոր մարմինը՝ ելնելով կազմակերպության գործունեության անընդհատության սկզբունքի բացակայությունից:

Հոդված 19. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարին և միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանը:

2. Հաշվետու տարին տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանն է: Նոր ստեղծված կազմակերպությունների համար առաջին հաշվետու տարի է համարվում դրանց պետական գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Հաշվետու տարվա համար պարտադիր կազմվում են տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Օրացույցային տարվա ընթացքում գործունեությունը առանց իրավահաջորդության դադարեցրած կազմակերպության համար վերջին հաշվետու տարի է համարվում տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև գործունեության դադարեցման նպատակով համապատասխան դիմումը ռեգիստր մուտք լինելու օրը ընկած ժամանակահատվածը:

3. Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանը հաշվետու տարուց փոքր ժամանակաշրջան է: Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի համար միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ կազմվում են օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կամ կազմակերպությունների հայեցողությամբ:

Հոդված 20. Ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելը

1. Կազմակերպությունները ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են՝

1) մասնակիցներին (բաժնետերերին, փայատերերին)՝ օրենքի, կազմակերպության կանոնադրության կամ ներքին կանոնակարգերի համաձայն.

2) պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին և օրենքով սահմանված դեպքերում այլ անձանց՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.

3) վարկատուներին, փոխատուներին, կազմակերպության մասնակցությամբ տնտեսական գործունեության մյուս կողմերին՝ կամավորության հիմունքներով մինչև գործարքի կնքումը կամ կնքված գործարքի շրջանակներում:

2. Հաշվետվությունները փոստի միջոցով ներկայացնելու օր է համարվում փոստային բաժանմունքի ընդունման օրվա օրացուցային կնիքի արտատիպը, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում՝ հաշվետվության ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան ծանուցման հիման վրա հաշվետվության ներկայացման օրը:

Հոդված 21. Ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնությունը

1. Խոշոր կազմակերպությունները, ֆինանսական հաշվետվությունները օրենքով հրապարակելու պահանջ ունեցող ոչ առևտրային կազմակերպությունները, ինչպես նաև ստորև նշված ցուցանիշներից առնվազն մեկին բավարարող փոքր և միջին կազմակերպությունները պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել, եթե՝

1) հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) շահութահարկի հաշվարկման նպատակով սահմանված համախառն եկամուտը գերազանցում է մեկ միլիարդ դրամը.

2) հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է մեկ միլիարդ դրամը.

3) այլ օրենքով սահմանված է ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու պահանջ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները չեն տարածվում հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների վրա:

3. Կազմակերպությունները, որոնց տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են հրապարակման, պարտավոր են դրանք հրապարակել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ը, իսկ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու պահանջ սահմանված լինելու դեպքում՝ միջանկյալ հաշվետու

Ժամանակաշրջանի ավարտից հետո ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

4. Բանկերը, վարկային կազմակերպությունները, գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունները, վճարահաշվարկային կազմակերպությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողները, կարգավորվող շուկայի օպերատորը, կենտրոնական դեպոզիտարիան, ապահովագրական ընկերությունները, վերաապահովագրական ընկերությունները, ապահովագրական բրոքերները, ներդրումային ֆոնդերը, ներդրումային ֆոնդերի կառավարիչները, արժեթղթավորման հիմնադրամներն իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են համապատասխանաբար <<Բանկերի և բանկային գործունեության մասին>>, <<Վարկային կազմակերպությունների մասին>>, <<Գրավատների և գրավատնային գործունեության մասին>>, <<Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին>>, <<Արժեթղթերի շուկայի մասին>>, <<Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին>>, <<Ներդրումային ֆոնդերի մասին>>, <<Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում:

5. Ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ, բացառությամբ սնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների: Առանց աուդիտորական եզրակացության հրապարակված ֆինանսական հաշվետվությունները համարվում են չհրապարակված: Կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները հրապարակում է <http://www.azdarar.am> հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Գ Լ ՈՒ Խ 5

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 22. Պատասխանատվությունը հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելու համար

Կազմակերպության ղեկավարը և հաշվապահական հաշվառման կազմակերպման ու վարման համար պատասխանատու այլ անձինք հաշվապահական հաշվառումը կարգա-

վորող իրավական ակտերի պահանջները խախտելու համար պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Հոդված 23. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ կետի <<զ>> ենթակետով սահմանված ցուցանիշի կիրառման համար եռամյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է 2011 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքները ենթակա են պարտադիր կիրառման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքը:

5. <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերը մնում են ուժի մեջ, այնքանով՝ որքանով չեն հակասում սույն օրենքի դրույթներին:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ
2012 թ. _____ “ “
Երևան
ՀՕ-____-Ն

Ս. Սարգսյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169¹²-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «<չհրապարակելը>> բառից հետո լրացնել «<կամ դրանք ոչ ամբողջական ծավալով հրապարակելը>> բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 169¹³-րդ հոդվածի 1-ին մասում «<պետական մարմնի սահմանած>> բառերը փոխարինել «<օրենսդրությամբ սահմանված>> բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 244²-րդ հոդվածի 1-ին մասում՝ «169¹²-րդ » և «169¹³-րդ» թվերից հետո լրացնել «<(Բացառությամբ սույն օրենսգրքի 244¹²-րդ և 244¹⁶-րդ հոդվածներով սահմանված դեպքերի)>> բառերը:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 244¹⁶-րդ հոդվածով՝
«Հոդված 244¹⁶. Պետական լիազոր մարմինները

Օրենքով սահմանված դեպքերում ֆինանսական հաշվետվությունները համապատասխան պետական լիազոր մարմիններ ներկայացնելու պահանջի առկայության դեպքում այդ մարմինները քննում են սույն օրենսգրքի 169¹²-րդ, 169¹³-րդ

հողվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Պետական լիազոր մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն համապատասխան պետական մարմինները, որոնց անունից վարչական տույժեր նշանակում է պետական մարմնի ղեկավարը:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ս. Սարգսյան